# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՈ 3

1946 թվի մարտի 3-ին

Կայացավ ՀՍՍՌ. Ժողկոմսովետին կից Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման եվ Տեղավորման կոմիտեի նիստը, ներկայությամբ կոմիտեի անդամներ՝

Ընկ. ընկ. Բ. ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՅԱՆԸ, Մ. ՍԱՐՅԱՆԸ, Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԸ.

Կոմիտեի աշխատակիցներից՝ ընկ. ընկ. Խ. ՄՈՍԻՆՅԱՆԸ, Գ. ԳԶՐՅԱՆԸ եվ Հ. ՔՈՋԱՐՅԱՆԸ: Ընկ. ՄԱՐՋԱՆՅԱՆԸ հարգելի պատճառով նիստից բացակայում էր:

Նիստը ղեկավարում էր Բ. Աստվածատուրյանը

—"— քարտուղարում էր Ա. Սարգսյանը:

**1/ ԼՍԵՑԻՆ** —. 1946 թվին ներգաղթող հայերին ընդունման եվ տեղավորման պլանի մասին.

/ Զեկ. ընկ. Բ. ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՅԱՆ /
Ընկերներ Մելիք-Ադամյանը, Մ. Սարյանը, մի շարք հարցերի միջոցով պարզեցին զեկուցողի միջոցով ներգաղթող հայերի բնակարանային դրությամբ եվ նրանց աշխատանքի տեղավորման հարցերը:

Ելույթ ունեցավ ընկ. Մ. Կարապետյանը
Նա ասեց, համաձայն այս տարվա պլանի Արտասահմանից ներգաղթող հայերից մոտ երկու հազար 14-16 տարեկան հասակ ունեցող երեխաները պետք է տեղավորվեն ֆեզեներում եվ տեխնիկական ուսումնարաններում սովորելու համար. Ինձ թվում է ասեց ընկեր Կարապետյանը մեր կողմից գործուղվող ընկերները Արտասահմանյան հայերին կպարզաբանեն այդ հարցի կարեվորությունը, վերցնելով նրանց ցանկությունը, իրենց երեխաներին նշված ուսումնարաններում սովորելու համար: Այնուհետեվ ընկեր Կարապետյանն առաջարկեց, մտիկ Օրերս կոմիտեի աշխատակիցներից գործուղել Հայաստանի տարբեր շրջաններ ստուգելու տեղերում բնակարանային դրությունը՝ նշամելով ռյալ ցուցակ, թե որ շրջանում, որքան հնարավորություն կա ներգաղթող հայերին բնակարանով ապահովելու համար եվ այդ կարգն ընդունել մեր աշխատանքի ամբողջ ժամանակի ընթացքում:

**1/ ՈՐՈՇԵՑԻՆ** —. ա/ Հաստատել 1946 թ. արտասահմանի ներգաղթ հայերին ընդունման եվ տեղավորման պլանը.

բ/ Կոմիտեի աշխատակիցներից գործուղել շրջաններ բնակարանային դրությունը ստուգելու համար:

6

2/ ԼՍԵՑԻՆ –. Արտասահման գործուղվող ընկերների թեկնածուներ հաստատելու մասին.
/ զեկ. ընկ. Բ. Աստվածատուրյան/

Զեկուցող ընկեր Աստվածատուրյանը հայտնեց հետևյալը, անհրաժեշտ է մեր ներկայացուցիչները գործուղել արտասահմանյան մի շարք երկրներ՝ ներգաղթ հայերի մեջ քաղաքական-կազմակերպչական հարցերը տեղերում կատարելու համար:

Ընկ. Աստվածատուրյանը կոմիտեին ներկայացրեց այն ընկերների ցուցակը, որոնց անհրաժեշտ է գործուղել արտասահման:

2/ ՈՐՈՇԵՑԻՆ –. ա/ Հաստատել ներքոհիշյալ ընկերների թեկնածությունները Արտասահմանյան երկրներ գործուղելու համար՝

1. ԻՐԱՆ–Քալանթար Ռուբեն
2. Ղազարյան Ռուբեն:

ՍԻՐԻԱ– 1. Հարությունյան Համո
2. Խաչատրյան Համո

ԼԻԲԱՆ– 1. Զարչյան Զավեն
2. Կարապետյան Միքայել :

ՀՈՒՆԱՍՏԱՆ– 1. Գեվորգյան Գուրգեն
2. Մանուկյան Սարգիս

ԲՈՒԼՂԱՐԻԱ – 1. Խրիմլյան Արմենակ
2. Օթարով Մկրտիչ

ՌՈՒՄԻՆԻԱ – 1. Զարչյան Բաբկեն
2. Մուրադյան Գուրգեն

բ/ Խնդրել ՀՍՍՌ Ժողկոմսովետին հաստատել վերոհիշյալ ընկերների թեկնածությունը, արտասահման գործուղվելու համար.

գ/ Խնդրել արտաքին գործերի ժողկոմին, արագացնելու արտասահման գործուղվող ընկերների համար համապատասխան փաստաթղթեր պատրաստելու:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ /Բ. ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՅԱՆ /

–"– ՔԱՐՏՈՒՂԱՐ / Ա. ՍԱՐԳՍՅԱՆ /